Սուրբգրային հատված. Եսայի 9:1-7

I. Անվանեք Նրան Սքանչելի Խորհրդական

Բառացիորեն «խորհրդականի սքանչելիությունը»: «Սքանչելի» բառը նշանակում է. «Սքանչելի, արտասովոր, գործելու սովորական կարողությունը գերազանցող»: Այլ կերպ ասած՝ այս Աստված-մարդու խորհուրդը գերազանցում է մարդկային իմաստությունը: Նա կարիք չունի, և ոչ էլ ցանկանում է խորհուրդ ստանալ որևէ մարդուց:
Հռոմեացիների 11:34-ը հիշեցնում է մեզ, որ Նրա դատաստանները և ճանապարհներն անքննելիորեն խորն են. «Որովհետև ո՞վ գիտաց Տիրոջ միտքը, կամ ո՞վ եղավ Նրա խորհրդակից», - հարցնում է Պողոսը: Եվ այս հարցը մինչ օրս դեռ անպատասխան է, որովհետև Նա գերբնական Խորհրդական է, և Նրա նմանը չկա: Ցանկացած իրավիճակում, ամեն դժվարության դեպքում Նա ճշգրտորեն գիտի, թե ինչպե՛ս վարվել: Նրա ծրագիրն անսխալական է և զարմանալիորեն ճիշտ է: Եթե դուք ցանկանում եք առաջնորդություն ունենալ կյանքում, թույլ տվեք ծանոթացնել ձեզ այս Խորհրդականի սքանչելիությա՜նը:

II. Անվանեք Նրան Հզոր Աստված

Բառացիորեն այս տիտղոսը նշանակում է՝ «հերոսական, ուժեղ Աստված»: Այս Մանուկն Աստծո Որդին է՝ Աստվածության Երկրորդ Անձը, Ում պատկանում է Աստծո ամբողջ զորությունը: Մեկ բառով ասած՝ Նա ամենակարող է:
Եթե միացնեք այս տիտղոսը նախորդին, կնշանակի, որ Աստված, Ով մարդ դարձավ, կարող է լիարժեք կերպով իրականացնել այն ամենը, ինչ ենթադրում են Իր բոլոր փայլուն ծրագրերը: Ահա թե ինչու Նա կարող է ասել. «...Իմ խորհուրդը պիտի հաստատվի, և անում եմ Իմ բոլոր ուզածը» (Եսայի 46:10): Իրականում, այս Թագավորն այնքա՜ն զորավոր է, որ Նա կարող է կլանել ողջ չարիքը, որն ուղղված է Իր դեմ, մինչև որ այլևս չարիք չմնա, և միևնույն է՝ հաղթել թշնամուն:
Եվ այս հիասթափեցնող աշխարհում, որտեղ ես հակված եմ տկարանալուն և հոգնելուն, ինձ պետք է այնպիսի Թագավոր, ով արթուն կլինի ողջ գիշեր, մինչ ես վերականգնվում եմ քնիս մեջ, այնպիսի Հաղթող, Ով ի զորու է պահել Իր Խոսքը, և այնպիսի Փրկիչ, Ով կարող է քանդել մեղքի զորությունն իմ կյանքում: Անվանե՛ք Նրան Սքանչելի Խորհրդական, Հզոր Աստված:

III. Անվանեք Նրան Հավիտենության Հայր

Ոմանք թարգմանում են այս տիտղոսը որպես «Հավիտենական Հայր»: Այս Մանուկը ամենալավ հայրը կլինի ինձ համար՝ սիրող, ինքնազոհաբերող, ով մշտապես ձգտում է լավագույնին ինձ համար: Սաղմոս 103:13. «Ինչպես որ հայրը կգթա որդիներին, այնպես գթած է Տերը Իրենից վախեցողներին»: Այս Թագավորի հայրական գթասրտությունը երբեք չի սպառվի: Նա իմ Հավիտենական Հայրն է:
Միացրեք այս տիտղոսը երկու նախորդ տիտղոսներին, և կհասկանաք, որ իմ Սքանչելի Խորհրդականի արդյունավետ ծրագրերի նպատակը մշտապես լավագույնն է ինձ համար, և այդ ծրագրերն իրագործելու զորությունը մշտապես կանոնավորված է այն բանով, որ ես լինեմ Նրա ուղեկիցը, և Նա խորին ու սիրով լի մասնակցություն ունենա իմ կյանքում: Ահա թե ի՛նչ է նշանակում՝ ունենալ «Հավիտենական Հայր»:

VI. Անվանեք Նրան Խաղաղության Իշխան

Նա կգերազանցի Իր բոլոր թշնամիներին, Նա կգրավի Իր ժողովրդի սրտերը, և այս Մանուկը սկիզբ կդնի այնպիսի բանի, ինչը, ըստ խոսք 7-ի, երբեք չի դադարի աճել, և Նա կանի այս ամենը առանց բռնի ուժ գործադրելու, այլ Իր թշնամիներին ապազինելու և խաղաղություն բերելու միջոցով

Իմ Խորհրդականը միշտ ունի անհրաժեշտ ամեն ինչ՝ Իր մտադրություններն իրականացնելու համար, և Նրա սքանչելի ծրագրերը մշտապես և բացառապես կանեն այն, ինչը ճիշտ է և լավագույնն է ինձ համար, և Նա երբեք չի գործադրի Իր ուժն ընդդեմ ինձ և երբեք չի հարկադրի ինձ: Նա ստանում է իմ հավանությունը և շահում է ինձ քաղցրությամբ, հավատարմությամբ և բարությամբ, որպեսզի ես ցանկանամ կատարել Նրա կամքը:

Եսային տեսավ Նրա գալուստը, Ով լինելու էր Աստծո պատասխանը ձեր և իմ պես մեղավորների համար: Նա տեսավ Հիսուսին՝ Սքանչելի Խորհրդականին, Ով եկավ իմաստությամբ և խորհրդով, այսինքն՝ կատարյալ ծրագրով: Հետևե՛ք Նրան: Որպես Զորավոր Աստված՝ Նա կիրագործի Իր նպատակները: Սատանան նետեց Հիսուսի վրա այն ամենը, ինչ ուներ, բայց չկարողացավ խափանել այն ծրագրերը, որոնք Աստված նախատեսել էր Քրիստոսի միջոցով: Թաքնվե՛ք Նրա ետևում: Լինելով Հավիտենության Հայր՝ Նա անվերջ սիրում է մեզ: Վայելե՛ք Նրա ներկայության մեջ լինելը: Եվ որպես Խաղաղության Իշխան՝ Նա հաշտեցրեց մեզ, երբ մենք դեռ Նրա թշնամիներն էինք: Վստահե՛ք Նրան և ընդունե՛ք Նրա իշխանությունը:

Ընկերնե՛ր, ես տալիս եմ ձեզ այս աշխարհի վերջին և մեծագույն Թագավորին՝ այն Թագավորին, Ով վերջ կդնի բոլոր թագավորներին, Ում թագավորությունը և խաղաղությունը երբեք չեն դադարի ընդարձակվել: Ես տալիս եմ ձեզ այն Փրկչին, որի կարիքը բոլորս ունենք: Ես տալիս եմ ձեզ այն Առաջնորդին, Ում բոլորս փափագում ենք: Ես տալիս եմ ձեզ մարդու սրտի ամենամեծ հարցի պատասխանը՝ ես տալիս եմ ձեզ Հիսուսի՛ն: